

Առաջարկություններ՝ պաշտոնատար անձանց և հողագործների համար

Պետսիցիդները՝ բույսերի պաշտպանության քիմիական միջոցները, քիմիական նյութեր են, որոնք նախատեսված են մշակաբույսերի վնասակար օրգանիզմների (վնասատուների, հիվանդությունների և մոլախոտերի) դեմ պայքարելու համար:

Դրանք թունավոր են կենդանի օրգանիզմների համար, այդ պատճառով էլ պոտենցիալ վտանգ են ներկայացնում մարդու առողջության և շրջակա միջավայրի համար:

Շրջակա միջավայրի համար լրացուցիչ վտանգ են ներկայացնում ոչ պիտանի պետսիցիդների պաշարները: Դրանք են՝

- ժամկետանց,
- ոչ ճիշտ պահպանության պատճառով որակազերծված,
- միջազգային կոնվենցիաներով արգելված, ուժեղ ազդեցության թունաքիմիկատները:

Յուրաքանչյուր ոք պետք է իրազեկ լինի բույսերի պաշտպանության քիմիական միջոցների ձեռք բերման, ճիշտ օգտագործման, պահպանման և ոչնչացման մասին հրահանգներին:

Անհրաժեշտ է հրաժարվել բույսերի պաշտպանության ժամկետանց քիմիական միջոցների օգտագործումից:

Բույսերի պաշտպանության քիմիական միջոցներ գնելիս, անհրաժեշտ է՝

- ձեռքի տակ ունենալ օգտագործման համար թույլատրված բույսերի պաշտպանության քիմիական միջոցների անվանացանկը, որը հաստատված է պետական լիազոր մարմնի կողմից և պարբերաբար համալրվում է նոր ապրանքանիշերով,
- դրանք ձեռք բերել լիցենզավորված խանութներից, այն չի կարելի գնել պատահական մարդկանցից,
- բույսերի պաշտպանության քիմիական միջոցները ձեռք բերել անհրաժեշտ քանակով կշռաբաշխված փաթեթներով,
- ստուգել պիտակի առկայությունը փաթեթների վրա, որտեղ պետք է նշված լինի բույսերի պաշտպանության քիմիական միջոցի անվանումը և օգտագործման հրահանգները,
- մանրակրկիտ ուսումնասիրել հրահանգները և խստորեն հետևել դրանց կատարմանը:

Թունաքիմիկատներով աշխատելիս, անհրաժեշտ է՝

- օգտագործել համապատասխան արտահագուստ և անհատական պաշտպանիչ միջոցներ,
- խուսափել ծխելուց, ուտելուց և խմելուց,

- մշակել տարածքը միայն առավոտյան մինչև 10:00 և երեկոյան 18:00-ից հետո, քամու և անձրևի բացակայության պայմաններում,
- նախապես պոլիէթիլենով ծածկել այն մարզերը, որոնք մշակման կարիք չունեն,
- ջերմոցները մշակել՝ մնացած բոլոր աշխատանքների ավարտից հետո,
- կողպել ջերմոցը, կախել նախազգուշական ցուցանակ և չմտնել այնտեղ՝ մինչև տվյալ բույսերի պաշտպանության քիմիական միջոցի համար նախատեսված սպասման ժամկետի ավարտը,
- օգտագործել սրսկիչ, որի ձողի երկարությունը պետք է լինի 1,2մ, որպեսզի լուծույթի կաթիլները չընկնեն մաշկի վրա, աչքերի մեջ և չանցնեն շնչուղիները,
- խուսափել մշտապես միևնույն բույսերի պաշտպանության քիմիական միջոցի օգտագործումից, քանի որ վնասատուները հարմարվում են դրանց և չեն ոչնչանում:

Աշխատանքի ավարտից հետո, հարկավոր է՝

- լոգանք ընդունել, ողողել բերանը, փոխել հագուստը,
- աշխատանքային հագուստը պահել մնացած հագուստներից առանձին,
- ամբողջ հանդերձանքը լվանալ տնտեսական օձառով, իսկ այն, ինչ հնարավոր չէ լվանալ, մաքրել օձառի լուծույթով, այնուհետև պարզաջրել մաքուր ջրով,
- գործիքները, որոնք շփման մեջ են եղել թունաքիմիկատի հետ, լվանալ օձառաաղային լուծույթով կամ քացախաջրով,
- խնամքով փակել յուրաքանչյուր փաթեթը, պիտակը և օգտագործման հրահանգները թողնել փաթեթի վրա:

Բույսերի պաշտպանության քիմիական միջոցի մետաղական և պլաստիկ դատարկ տարաները արգելվում է օգտագործել կենցաղային կարիքների համար:

Բույսերի պաշտպանության քիմիական միջոցներն անհրաժեշտ է պահել բնակելի տարածքից հեռու, փակ շինության ներսում, դարակների վրա՝ կողմնակի անձանց, երեխաների և կենդանիների համար անհասանելի տեղերում: Չի կարելի դրանք թողնել բաց երկնքի տակ:

Առաջարկություններ այն տարածքների համար, որտեղ կան ժամկետանց թունաքիմիկատների կուտակումներ

- Նուրբառաշեն տարածքի նկատմամբ սահմանել պարբերական ինժեներակրթաբանական, լաբորատոր հսկողություն և պահպանություն
- Շահագրգիռ կառույցները միջազգային դոնոր կազմակերպությունների և խնդրով հետաքրքրված պետությունների հետ պետք է վարեն բանակցություններ՝ ֆինանսավորման և օգտագործման համար ոչ պիտանի թունաքիմիկատների ոչնչացման աշխատանքների կատարման համար
- Ոչնչացնել/հեռացնել բնակավայրերում մնացած բոլոր ժամկետանց թունաքիմիկատները՝ հետագա տարածման վտանգը կանխելու համար

- Մաքրել և վերականգնել աղտոտված վայրերը և դրանց հարակից տարածքները
- Կատարել աղտոտված վայրերի մերձակա ավելի ընդարձակ տարածքների մոնիթորինգ, պեստիցիդների մոնիթորինգ սննդային շղթայում, կենսաբանական նմուշառում
- Տեղեկացնել տեղաբնակներին՝ այդ նյութերի վնասակար հատկությունների և առողջության համար դրանց ներկայացրած ռիսկերի մասին
- Կատարել որոնողական աշխատանքներ՝ Հայաստանում այլ աղտոտված բնակավայրեր հայտնաբերելու ուղղությամբ, կատարել հայտնաբերված թեժ կետերի գույքագրում
- Իրականացնել ժամկետանց թունաքիմիկատների վերափաթեթավորում և պահպանում՝ առավել անվտանգ տեղում (լավագույն տարբերակը՝ կենտրոնացված ապահով պահեստ, ոչ անպայմանորեն թանկ)
- Ցանկապատել աղտոտված տարածքները
- Արգելել աղտոտված շինությունների օգտագործումը՝ ներկայումս օգտագործվող պարարտանյութերի և թունաքիմիկատների պահեստավորման նպատակով
- Ապահովել պաշտպանիչ արտահագուստ՝ աղտոտված տարածքում աշխատող անձնակազմի համար

Աղտոտված տարածքների ոչնչացման հարմարավետ գործընթացը / տեխնոլոգիան պետք է՝

- կանխի դիօքսինների, ֆուրանների և ԿՕՍ-ների կողմնակի արգասիքների առաջացումը և արտանետումները,
- չառաջացնի ԿՕՍ - թափոններ,
- չօգտագործի ԿՕՍ-ների ոչնչացման այնպիսի մեթոդ, որը չի նախատեսում դրանց վերացումը, օրինակի համար, գերեզմանոցի ստեղծումը կամ որևէ եղանակով վերամշակումը,
- ապահովի ոչնչացման 100% արդյունավետությունը՝ հաշվի առնելով ներդրումները և արտանետումները,
- ապահովի արտադրական գործընթացի յուրաքանչյուր փուլի դադարեցում, որպեսզի անհրաժեշտության դեպքում, հնարավոր լինի կատարել ստուգումներ և այնուհետ կրկին շարունակել գործընթացը,
- բացառի արտադրական որևէ գործընթացի հետևանքով չվերահսկվող արտանետումների առաջացումը:

Նկատառումներ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել՝ տեխնոլոգիաները գնահատելիս՝

- ոչ պատշաճ տեխնոլոգիաներից հրաժարում (օրինակի համար, ԿՕՍ-ների/ԿՕՍ-ների արտանետումների առաջացում, ԿՕՍ-ների թափոնների գերեզմանոցի ստեղծում (հիմնվելով ուղեցույցի / չափանիշների վրա),
- ոչնչացման արդյունավետությունը (ներդրումները համադրելով արդյունքների հետ)

- գործընթացի յուրաքանչյուր փուլն ընդհատելու հնարավորությունը,
- անհրաժեշտության դեպքում, նյութերի, մնացորդային քանակների, գազերի, հեղուկների վերամշակման հնարավորությունը,
- ամբողջական գործընթացի մասին տեղեկությունների (վերլուծական տվյալների) մատչելիությունը,
- գրանցումներին հետևելը (առկայությունը վաճառքում),
- պրոֆեսիոնալ հիվանդությունները և անվտանգությունը,
- վտանգավոր նյութերի օգտագործումը,
- համայնքի կողմից ընդունելի լինելու հանգամանքը:

Առաջարկություններ՝ կենցաղային թափոնների աղբահանության մասին

- Պետք խուսափել վառարաններում կամ բացօթյա պայմաններում կենցաղային թափոնների այրումից, որպեսզի կանխվի դիօքսինների և ֆուրանների՝ թունավոր քիմիական նյութերի արտանետումների, ինչպես նաև այլ թունավոր քիմիական նյութերի, օրինակ, սիրենի առաջացումը, որը հիմնականում կարող է գոյանալ պլաստիկ թափոնների (օրինակի համար, պոլիվինիլքլորիդ կամ պոլիստիրեն) այրումից
- Առանձին հավաքել տնտեսությունում գոյացած կենսաբանական թափոնը և խրախուսել վերջինիս կոմպոստացումը բնակիչների կողմից, որը կօգնի կանխելու աղբավայրում գազի առաջացումը
- Բնակիչներից առանձին հավաքել վտանգավոր թափոնները (օրինակ, օգտագործված մարտկոցներ, ջերմաչափեր, ներկերի և այլ քիմիական արտադրանքների փափեթվածքներ և այլն)՝ աղբավայրերից վտանգավոր նյութերի արտահոսքը կանխելու նպատակով: Այսպիսի թափոնները պետք է առնվազն պահվեն ապահով եղանակով:
- Շինարարական նյութերից և/կամ ամենօրյա գործածության ապրանքներից թունավոր նյութերի արտանետումները կանխելու նպատակով, գյուղապետարանը կարող է մշակել առաջարկություններ՝ նոր տների կառուցման պայմանների վերաբերյալ և կանխել պոլիվինիլքլորիդի օգտագործումը, որը կարող է պարունակել ֆտալատներ, ծանր մետաղներ և ոչ ցանկալի այլ հավելումներ: Դա կօգնի նաև շենքերի պատահական հրդեհների ժամանակ խուսափել դիօքսինների ու ֆուրանների առաջացումից: